

ԲՐԵՅԼՅԱՆ ՏՊԻՉ #14 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

Նպատակ

Բարելավել # 14 հատուկ դպրոցի տեսողական խնդիրներ ունեցող աշակերտների կրթական փորձառությունը և նրանց համար ապահովել նույն ուսումնական պատրաստվածությունը, ինչ իրենց տեսնող հասակակիցների:

Գործողություններ

- Գնել Բրեյլյան տպիչ/դրոշմիչ,
- Ծրագրավորել դրոշմիչը, որպեսզի ներառի հայերեն տառատեսակ:

Ծրագրի նկարագրությունը

Հայաստանում կա ընդամենը մեկ հատուկ դպրոց տեսողական խնդիրներ ունեցող երեխաների համար՝ # 14 հատուկ դպրոցը: Դպրոցում սովորում են հաշմանդամության տարբեր աստիճան ունեցող 92 երեխա՝ տեսողության թեթև խնդիրներ ունեցողներից մինչև բացարձակ կույր:

Դպրոցում կիրառվող հիմնական կրթական միջոցներից են Բրեյլյան դասագրքերը: Երկար տարիներ շոշափելով կարդալու արդյունքում դրանցից շատերը անվերականգնելիորեն մաշվել են, այնքան, որ ամբողջական բառեր և նույնիսկ հատվածներ բացակայում են գրքերից: Շատ գրքեր նաև հնացել են, քանի որ կրթական ծրագիրը մշտապես թարմացվում է Կրթության և գիտության նախարարության կողմից:

Քանի որ Բրեյլյան դասագրքերի կամ նույնիսկ աշխատանքային տետրերի արտադրությունը նաև թանկ է, երեխաները հաճախ ստիպված են գործածել հին, մաշված դասագրքերը: Արդյունքում տեսողական խնդիրներ ունեցող աշակերտները Հայաստանում հետ են մնում տեսնող աշակերտներից՝ կրթական ծրագրի մշտական փոփոխությունների և այդ ծրագրի զարգացումներն ու ներկա իրադարձությունները աշխատանքային տետրերի մեջ հեշտորեն արտացոլելու մանկավարժների անկարողության պատճառով, ինչը կենսական նշանակություն ունի բազմակողմանի զարգացած քաղաքացի կրթելու համար:

Բրեյլյան տպիչը # 14 հատուկ դպրոցին հնարավորություն կտա հետ չմնալ կրթական ծրագրի փոփոխություններից՝ տեղում տպելով փոփոխված դասագրքերի Բրեյլյան տարբերակները: Դպրոցի 92 աշակերտները կստանան արժեքավոր և ժամանակակից կրթություն, որը նրանց համար կապահովի նույն ուսումնական պատրաստվածությունը, ինչն արդարացիորեն տրամադրվում է իրենց տեսնող հասակակիցներին:

Բյուջե

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
1 Everest D V4 Բրեյլյան դրոշմիչ	1	$4,195
Duxbury Բրեյլյան թարգմանչական ծրագիր	1	$595
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ		$4,790